ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(19/6-Լ) ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 09.04.2019 թվականի թիվ 221/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.04.2019 թ. ժամը 11:00-ին, ՀՀ պետական եկամուտների վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու 3,7:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղարիբջանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ. Վանյանը, Տ. Պետրոսյանը, Մ. Կարապետյանը, Լ. Դեմիրչյանը, քարտուղար Լ. Հարությունյանը, «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ալեքսան Պետրոսյանը:

<u>Գների նվազեցման նպատակով բանակցությունների անցկացման մասին</u>

ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(19/6-Լ) ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մ. Դուրգարյանը տեղեկացրեց, որ հանձնաժողովը ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(19/6-Լ) ծածկագրով գնման հրավերի 7.7 կետի համաձայն գնանշման հարցման ընթացակարգի համար գների նվազեցման նպատակով բանակցություններին մասնակցելու համար գնային առաջարկ ներկայացրած և հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին 19.04.2019թ. Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով հրավիրել էր 23.04.2019 թ. 11:00-ին մասնակցելու բանակցություններին:

23.04.2019 թ. 11:00-ի դրությամբ բանակցություններին մասնակցում էր «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ալեքսան Պետրոսյանը:

Գնահատող հանձնաժողովը բանակցությունների համար մասնակցին տրամադրեց 20 րոպե: Մասնակիցը իր ներկայացրած գինը իջեցրեց 52 000 դրամի՝ նախահաշվով սահմանված գնին հավասար:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ին ճանաչել 8-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

<u>Արձանագրություն 2-ում լրացում կատարելու մասին</u>

2. Արձանագրություն թիվ 2-ի երկրորդ մասի առաջին կետի ա պարբերությամբ տողը լրացնել «6-րդ չափաբաժնի մասով» բառերով՝ ամբողջական տարբերակում ունենալով հետևյալը՝ «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(19/6-Լ) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ 7-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ին»:

3. Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հայտով առաջարկվող ապրանքի /ապրանքների/ ամբողջական նկարագիրը:

4. Սահմանված կարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտե էլեկտրոնային հարցումը չներկայացնել՝ հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարցումն արդեն արվել է:

5. Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերահիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ղարիբջանյան

անդամներ՝ _____ Հ. Վանյան

_____ Տ. Պետրոսյան

_____ Լ. Դեմիրչյան

_____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան